



Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

Վարդապանք (Ալափարս) գյուղը հայոց աշխարհի հինավոր բնակավայրերից է: Այստեղ մարդն ապրել է երրորդ հազարամյակից սկսած, որի վկարությունն է «Սանգառ» ամրոցը բնակատեղին: Դարերի հոլովովում (17-րդ դար) ամայացել է գյուղը և ապա վերաբնակեցվել 1830 թ.: Խոյից, Մակուից, Վանից ու Ալակերտից ներգաղթած տարագիր հայերով:

Վարդապանքն առանձնապես հայտնի է միջնադարյան հուշարձաններով, որոնք ճարտարապետական բացադրիկ երևությունը չլինելով հանդերձ, կարևոր են գյուղի երկարամյա պատմությունը հյուսեկո համար:

**Ս. Վարդան եկեղեցի.**— Նշանափոր այս ուխտատեղին գտնվում է գյուղի կենտրոնում: Հավանաբար այն կառուցվել է 5-րդ դարում, սակայն մեզ հասել է հիմնովին վերակառուցված: Վերաշինությունն ու հա-

վերամեները կատարվել են 1857-ին, պատմական Հայաստանից ներգաղթածների շանթերով՝ համագոյնացի մեծահարուստ Ավետիս Մելիք-Բահայանի նախաձեռնությամբ:

... Ըստ վավերագրերի Խոյից ժամանած առաջին քարպանը (60 տուն՝ 200 շնչով) բնակությունը է հաստատել գյուղի ներքին թաղամասում, իսկ երկրորդը (40 տնեանություն՝ 150 շնչով), որը գաղտել է Մակուի Շաբրուկաղ գյուղից՝ հաստատվել է գյուղի վերին, աղբյուրամերձ թաղամասում:

Վերջիններս իրենց են բերում են Ավարայրի դաշտում Վարդան Մամիկոնյանի արյամբ ներկված, սրբացված երկու սև քար, որոնցից մեկը պահ են տախի երեանի «Պողոս-Պետրոս» եկեղեցում, իսկ մյուսը պահում են նախ գյուղի Ս. Աստվածածին (ծիրանավոր) եկեղեցու բեմում, իսկ հետո, եթե վերակառուցում են բազիլիկ եկեղեցին, քարը փոխադրում են նորակառույց, որը և մնում է մինչև օրս: Նոյնանման մի քար է (երրորդը) նրանք թողնում



Վարդանավանքի ս. Վարդան եկեղեցին:

են իրենց հայրենի Մակուի նոյնանուն եկեղեցում, որ դարձյալ նշանափոր ուխտատեղի էր:

Եկեղեցին կառուցված է բազալտն կոպտակոփ, իսկ զանգակատունն ու շրամուտքը՝ հղկված քարերից: Այն ունի երկու ծածկ և երկու մուտք: Եկեղեցին ներքուստ փայտածածկ է: Հստակ երևում է, որ տակավին մեզ անհայտ անունով հնագոյն բազիլիկայի հենքի վրա, աջ և ձափս կողմերից հավելվել են խորաններ, վերաշինվել երկայնական և լայնական պատերը:

Ցուրաքանչյուր տարի, <sup>առկ</sup> կամքերի 20-ին հաջորդող շաբաթը օրը, շրջակա բնակավայրերից (այժմ էլ, ի դեռ) հազարավոր ուխտավորներ են գալիս սր. Վարդան՝ երկրագության:




Խաչքար ս. Վարդան եկեղեցու առնելյան պատին:

**Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցի.**— սր. Վարդան զրոավոր եկեղեցուց փոքր ինչ հյուսիս-արևելք գտնվում է Մարիամ Աստվածածին (ծիրանավոր) կոչված կիսավեր, առախրան գմբեթակիր եկեղեցին:

Դատկով շինության արևելյան կիսակործան պատի վրա եղած զարդարակի, ինչպես նաև հարավային խաչքանի ու մուտքի զույգ որմնապյուների խարիսխների տվյալներից, դորւ շեշտված խաչքաներով հատակածին ու շինարվեստից, եկեղեցին հավանաբար կառուցվել է ոչ ոչ քան 7-րդ դարի վերջին տասնամյակներում: Այդ են հավաստում արևելյան երեսակալի մշակումը (սրտաձև զարդմուտիվ), ինչպես նաև քիվի թեքադիր հարթության վրա եղած հյուսածն զարդանախչերը:

9—10-րդ դարերում զբուղ և եկեղեցին գտնվել են Սլովենաց իշխանների իրավասության ներքո: Հավա-



Հնագոյն խաչքար ագուցված ս. Վարդան եկեղեցու արևմտյան պատին (3-րդ դար):



Խաչքար ագուցված Թուխմանուկի  
արևելյան պատին:

Տական է կարծեց, որ եկեղեցու արևելյան պատի վրա եղած արձանագրության մեջ մի ժամանակ հիշատակված Գրիգոր իշխանը (այդ ամփանը այժմ չենք հանդիպում արձանագրության մեջ), Սյունաց Վասակ Գարուն իշխանի որդի Գրիգոր Սուփանն է՝ Բագրատունի Աշոտ Բ. բազակիր դաստի՝ Մարիամ իշխանունու որդին:

Հաս երևոյթին եկեղեցին կործանել են այլազգիները ոչ դարերում:

Այս իր այժմյան պարզունակ տեսքով վերաշինվել է 17-րդ դարի ըսկըզբում հին եկեղեցու հիմքի վրա՝ պահպանելով 5—6 մետր բարձրությամբ պատերը: Եկեղեցու բեմի աշխանիւթյունը հետագայում կառուցվել են լրացուցիչ խորաններ, որոնց մոտքերի մոտ տեղադրվել են խաչքարեր: Կան հին եկեղեցու արձանագրություն կրող ուրիշ քարեր ևս, որոնց մի մասը տեղադրվել է մերձակա, հնատագայում վերակառուցված սր. Վարդան եկեղեցու պատերի մեջ:

**Մատուռ-սրբատեղի.**— Այս անշուր կառուցը գրուի հարավ-արևելյան եզրում է, տեղադրված ջրապաշտական հանգույցում: Այժմ էլ քարափի տակից բխում է սրբատեղ աղբյուրը: Քարափի բարձրադիր փեշին կանգնած մատուռը կոչվում է Թուկ մանուկ՝ երկար ու ծիգ տարիների ընթացքում բյուրավոր վառված մոմերից սկացած «մուրազատու» խաչքարով, որ ազուցվել է պատին: Մատուռն առնվազն հազարամյա հասակ ունի:

**Սր. Աստվածածին եկեղեցի.**— Գյուղի կենտրոնում, 120-ամյա վաղեմություն ունեցող դպրոցի դեմ հանդիման, վեր է խոյանում «Մարիամ Աստվածածին» բազիլիկատիպ եկեղեցին՝ կրոնի դեմ մղած պայքարի տարիներին կործանված զանգակատնով:

Ավանդաբար պատվում է, թե ինչ-որ դեպքերի թեղադրանքով, վերի թաղի բնակիչները գժուվում են ներքին թաղեցիների հետ և որոշում են իրենց համար նոր եկեղեցի կառուցել:

Գործի կազմակերպումն ստանձնում է վերի թաղեցիների շրջանում մեծ հեղինակություն վայելող դարբին-խալիֆա Հակոբ Աղաքարաբյանը: Նա էլ մեկնում է Էջմիածին, ներկայանում Խրիմյան Հայրիկ հայոց



Մ. Աստվածածին (Ծիրանավոր)  
մուտքը, 7-րդ դար:




Խաչքար Մ. աստվածածին (Ծիրանավոր) եկեղեցու աջ խորանի  
մուտք:

կաթողիկոսին, խնդրում երա համաձայնությունը և, վաճիք նարտարապետին հետև առած, վերադարձնում: 1891 թ. գարնանը փորվում է եկեղեցու հիմքը՝ 30 մետր երկարությամբ և 18 մետր լայնությամբ: Շինարարությունը իրականացնելու համար Հակոբ Ալեքսանդրապոլից հրդավիրում է Ծանավոր վարդետների՝ Արքանու Զարիֆյանին և Կառապետին:

Հարկ է լինում մեկնել նաև Երեւան և դիմել քաղաք փոխադրված պատիարտեցի մեծահարուստների օգնությանը: Հայտնվում է մի որիշ հավատացյալ քարեպաշտ և՝ զան-

ձակեցի դարրին Սահակ Սարգսյանը, որը եկեղեցու շինարարության համար նվիրում է 1000 ոորիի (այդ մասին է պատմում եկեղեցու արեւկեցան պատի վերնամասի արձանագրությունը):

Հասարակության, ճարտարապետի և շիրակցի Ծանավոր վարդետների ջանքերով վեր խոյացած, սրբատաշ քարով կառուցված պաշտամունքի այդ տաճարը, քառամույթ մի քաղլիկ է, որն այժմ էլ հիացնում է իր ծավալներով, ներքին և արտաքին հարդարաճրով: Այն ունի երեք մուտք և շրջանակածն փոքրածավալ գեղանկար ներ լուսանուտներ: Մուտքերի աջ և ձախ կողմերում փորված են փոքրածավալ, հիմասարածն և շրջանակի մեջ առնված խաչեր: Խոկ-



Մ. աստվածածին (Միրանավոր):



Մ. աստվածածին (Միրանավոր)  
հյուս. արեւելան պատը (7-րդ դար):



Վարդանավանքի Մ. աստվածածին եկեղեցին (կառուցվել է 1891—97 թթ.):




Մ. աստվածածին եկեղեցին (19-րդ դար):

արևմտյան վերնամասում, տանիքին; ուներ մինչև 30-ական թվականները կանգուն, քարակերտ, ոսկեգույն թիթեղով ծածկված զանգակատուն՝ երկու մեծ և երկու փոքր զանգականերով:

Վարդանավանքի Աստվածածինը Հայաստանում 19-րդ դարի վերջում կառուցված լավագույն հոգևոր շենքերից մեկն է և արժանի է պատշաճ հոգատարության:



Խաչքար ս. Վարդան եկեղեցու  
արեւելան պատին (մուտքը ց ձախ):



**ՇԱՎԻՂ ՍՈՒՐԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Վարդանավանք**

**Գիտ. խմբագիր՝ Ս. Տ. ՄԱՂՈՒՄՅԱՆ  
Մելքոնյան Պատվեր 947**

**ՀԿԿ ԿԵՆՏԿՈԾԻ ԲՐԱՄԱՐՁԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԱՊԱՐԱՆ**

**Դինը՝ 60 կող.**

Խաչքար Մ. աստվածածին նկն-  
դեցու ձախ խորանի մուտքի մոտ: